



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

#### Հ Ր Ա Մ Ա Ն

2018թ. սեպտեմբերի 26

N 179

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածի 1-ին մասի, 161-րդ հոդվածի 2-րդ մասի և 162-րդ հոդվածների դրույթներով, ««Քաղաքացիական ծառայության մասին»» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշումը՝ **հրամայում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Աշտարակի սոցիալական աջակցության տարածքային գործակալության գլխավոր մասնագետ Մկրտիչ Սարգսյանին տալ ամենամյա արձակուրդ՝ 2017 թվականի հունիսի 28-ից 2018 թվականի հունիսի 28-ը ընկած ժամանակահատվածի համար՝ 24 աշխատանքային օր տևողությամբ 2018 թվականի հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 1-ը ներառյալ:

Հիմք՝ Մ.Սարգսյանի 2018 թվականի սեպտեմբերի 26 -ի դիմումը:

2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին՝ ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարել նաև լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով:

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ